ստանալ Հնութիւնների Պահպանութեան Կոմիտէի թոյլտուութիւնը։

7. Հնագիտական շրջանները բոլորովին չեն ենթարկուում հողաբաժանութեան. նրանց վրայ արգելում է շինարարական կամ գիւղատնտեսական աշխատանք կատարելը։

8. Պատահական կերպով երեւան եկած հնութիւնների մասին անմիջապէս պէտք է յայտնել Հնութիւնների Պահպանութեան Կոմիտէին։

9. Բոլոր վարչական մարմիններին և անձերին հրահանգւում է արթուն հսկողութիւն ունենալ հնութիւնների պահպանութեան վրայ։

10. Սոյն դեկրետը խախտողները ենթարկւում են պատասխանատուութեան Քրէական Օրէնսգրքի համաձայն։

11. Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարին յանձնարարւում է հրատարակել համապատասխան հրահանգ սոյն դեկրետի կիրարկութեան մասին*։

* Այս «Դեկրետ»ը Երեւան հրատարակուած է 1923 Դեկտ. 18ին։ Ստորագրած են ժողովրդական կոմիսարի Խորհուրդին նախագահը Մրապիոնեան–Լուսաչին և քարտուղարը։ Ծ. Խ.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. – Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես բազմ. 1924, էջ 220)

ՀԴ.

Առեւտրական կեանքի ու քաղաքական դէպքերու անցեալ յիշատակնե՛ր մը ահա։

Գերյարգելոյ Աբրոյ Հօրդ իմոյ, և Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածապանութեան վարդապետի

... ... թէ ի կողմանէ ապրուստի և պատերազմի հարցանէք, թանկ և գժուարագիւտ, զհացն խլելով առնուն, զձէթն և զարդար եղն ֆունթն 30 ստակ, հակիթն երեքն հինգ ստակ, և ոչ գտանի. աստ մեծ խումբ մի երկու աւուր հեռի ի կողմն պօսնայու ձմեռն. և այլք փոքր խումբք աստ և անդ. փոխանորդ և հրամայօղ և կառավարօղ է ձէնռալ Ֆիլիպօն. ասեն թէ ի զարնան գալոց է ձէնռալ Մալթին, Սեռական կառավար, թէպէտ ինքն հրաժարեալ վասն ծերութեան որ 60 ամաց է ասեն։ Իսկ տաճիկքն սիրտ առեալ զօրացեալ զազանացեալ յաւուրս յայսոսիկ ասպատակիչք հասեալ մինչև ի կողմունս օսօսվայու աւար հարկանէ քանթէ, գերէ, սպանանէ, այժմիկ լուաք զայսոսիկ. երկիւղն պատերազմին ապագայի ամի հալէ զոսկերս իմ...։

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Նոյեմբերի 22ին
ի տօնի Ցէչիլեայ կուսին
3 գիր, ի Պէլրդատ

Գերյարգութեան ձերում
Ճնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մէքայէլ Վ. Սեբաստացի

digitised by A.R.A.R.@

ՀԵ.

Պարունակութեան տեսակէտով՝ առատ, բազմատեսակ ու միանգամայն կարևոր է Հ. Միքայէլի հետագայ թուղթը, զոր իր պաշտօնավարէն կը յղէ։

Գերյարգելոյ Աբրայ Հօրդ Իմոյ
Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածարանուրեան վարդապետի

.. ... Թշնամիքն խաչին զօրացեալք խումբ խումբ շրջեալ, զաշխարհ սոցին ի կողմն զոզօվայու Ըձ տաճիկս տապաստ արկեր են սրով, և գնացեալս ի փախուստ դարձուցեալ են։ Այստ այժմ է թանկութիւն, ձիանց խոտ ոչ գտանի, հացն քան զվէնէտիկ թանկ, և խլելով առնեն ի ձեռաց իրերաց. ձուն, երկուքն թրայի մ'է և ոչ գտանի. արդար եղն, 7 թրայի ֆունթն, ձէթն 6. այդ տեղի մէկ ստկի չօխգամն և խնծորն, աստ 4 և 5 ստակ, բայց միսն ուժան, այսինքն ֆունթն մէկ թրայի։ Գինին մէկ պօցան 6 և 7 թրայի։ Այս ամենայն ոչ է յաղագս այսր, թէ բազմութիւն զօրաց կամ մարդկանց գոն աստ, զի ի ժամանակս խաղաղութեան, այլ աւելի լեալ են։ Այլ ասեն թէ իշխանք և վերակացուք քաղաքիս վասն ազահութեան իւրեանց և կաշառառութեանց թոյլ տուեալ են այս թանկութեանս ... զօրապետքն սոցին տիւ և գիշեր ի զահվէխանայսն կոյտ ոսկւոյ եդեալ խաղան նարտ. տանին և տարուին, և այլոյ իրի ոչ պարապին։ Դաև ահա աստ են ոմանք խեղճ և ողորմելի հայք աստի և անտի մազապուրծ փախստեայք անկեալք աստ. ոմանք յառաջ և ոմանք այժմ, են ուխտաւորք գնալ ի հոօմ, են չգաւորք, մերթ վասն միոյն և մերթ վասն միւսոյն ծանուցումն առնեմ յեկեղեցւոջ։ Ոչ ունին զբնակութիւն, այսպէս և ծերունի ոմն ազգիրմանցի ի ցրտութենէ կալեալ, փունթօ եղեալ, չունելով զտեղի և զապրուստ, թէպէտ զոմանս աւուրս ես դարմանեցի, բայց մեռաւ։ Ուխտաւորաց մինն է մարզուանեցի, սա երկու ամիս յառաջ ելեալ է աստի գնալ ի Հոօմ. զկնի երից և չորից աւուրց ճանապարհի, ասպատակօք մերկացուցեալ են զինքն, որ իբրու զգ. ոսկի ունեալ իցէ վասն ապրուստի իւրոյ. վերստին դարձեալ այսր, զի աշխատութեամբ գոնեայ շահեսցի ինչ, որով կարիցէ գալ այդր կողմն...։ Մի ևս էմիրէ դարձած նոր քրիստոնեայ մի, մկրտեցեալ ի Բարդողիմէոս Վ.է ի գռայովայ. մի ևս թոխաթցի երիտասարդ մի, տաճկացած ի Սուքիաս Վ.ի քովէն ելեալն, զոր մինաս Վ. եպիսկոպոսն կամեցեալ էր առնուլ մեյռ իւր...։ Եւ վասն թաղման հայր յակոբին գնացեալ է 46 ֆիօրին...։ Դաև լուաք աստ, թէ ի ստամպոլ զթագաւորն փոխեր են. զգալով ինքն, նախապէս փախեալ և թագեալ է, և անյայտացուցեալ զինքն։ Դաև զի մեծամեծ հօոմ կախեալ են. ի սելանիկ ևս ի տունս մտեալ զգործիք պատերազմի որոնել։...

Գերյարգութեան քում
Ճնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մխայէլ Վ. Սեբաստացի

Ցամի Տեառն 1737ին
դեկտեմբերի 7ին
4 գիր ի Պելգրատ

ՀԶ.

Գլխատուած «ձէնրալ»ը, որ կը յիշատակուի հետագայ և յաջորդ նամակներուն մէջ առանց անուան՝ Ցօշաղ զօրավարն է։

digitised by A.R.A.R.@

Գերյարգելոյ Աբրահամ հօրդ մերոյ տեառն տեառն Միխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

. . . . ահա նաև ի 20 մարտի հատին ասա զգլուխն նիշու զօրքին տուօղ ՃԷնրալին, որ ի յայսքան ժամանակ ի քննութեան էր ի բանտի ասա, և վճիռն գլխատման ի կայսերական իշխանութենէն եկն. չորեցս բախմամբ ապա հատեցեալ եղև. ոմանք ասացին թէ գկախարդութիւն ինչ արարեալ են զի մի մեռցի. բայց վերջապէս մեռաւ։ Որ և էր Լօթերական կրօնիս. կարգաւորք, նաև եպիսկոպոսն իսկ անձամբ խնդրեցին ի նմանէ զընդունումն ուղղափառ հաւատոյ, բայց նա ոչ ընդունեալ, այլ ասացեալ թէ ի յայսմիկ կրօնի մեռանիմ յորում ծնեալ եմ և սնեալ։ Իսկ զդահիճն եդին ի բանտի, թէ ընդէր բազմից բախմամբ էհատ զգլուխն և վերջապէս մորթեաց։ Դաև զոմանս ոմֆիցիալս ևս որք ընդ սա էին ի նիշն, ձգեալ ի պաշտօնից, վատահամբաւ արարին և տարագիր։ Ասեն ևս թէ զսեռական ՃԷնտռալն Սէքինտօռ, որ նա ևս Լօթերական է և անհաւատարիմ, կայսերն, որ այսքան ժամանակ ի բանտի է ի Վիէնա, և ի քննութեան, զնա ևս բերելոց են ասա, և հատանելոց են զգլուխն...։

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վրդպտ. Սեբաստացի

Ցամի տեառն 1738ին
ի մարտի 22ին
8երորդ գիր ի սոյն ամի
ի Պէլրզատու

ՀԷ.

Պելկրատու քաղաքական կեանքի և դէպքերու շուրջ Հ. Միքայէլ շատ աւելի մանրամասնութեանց կ'իջնէ։ Ըսենք սակայն, որ եթէ իր նպատակն է — ինչպէս կը տեսնենք — միշտ տեղեակ ընել զԱրբահայրը իր Միաբանութեան այդ ստանձնած առաքելութեան մասին, շարժուիթ մ'ալ ունի անկեղծօրէն ու խղճամիտ կերպով անդրադարձնելու, որ սոյն պարագաներուն տակ իր յառաջացեալ տարիքն ու անոր տկարութիւնները չեն նպաստեր գործերու յաջողութեան և յառաջացման։

Գերյարգելոյ Աբրահամ հօրդ մերոյ, տեառն տեառն Միխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

.... ան և երկիւղն տաճկին հալէ և ցամաքեցուցանէ զոսկերս իմ, զի ի չաբաթոջն երկու և երեք անգամ վայնասուն ելանէ ի գիշերի թէ եկն տաճիկն։ Ցաւագ ուրբաթու ի մէջ գիշերի, յորում ժամում սկսանելոց էաք զժամն, տեսաք արտաքոյ պարսպին ձայն աղաղակի և լալոյ, և արձակմանց հրացանից. բազմաց թուեցաւ հաւաստելու թէ տաճիկք իցեն եկեալ. երևակերպեցէք, թէ զինչ սիրտ ունայ կատարել զպաշտօն չարչարանաց տեառն. բայց որ ինչ և իցէ զկնի հանդարտմանն կատարեցաք արենախառն սրտիւ, և յետ ոմանց ժամուց նոյն գունակ աղաղակ և ձայն հրացանից յայլ կողմանէ, և յայս աւուրս սիրտս ի փորիս տրորեալ եղև, ոչ քուն և ոչ հանդարտութիւն, մինչեւ լուսացաւ, իմացաք թէ ոայք աւազակք և ասպատակօղք են եկեալ, ասպատակեալ, և կալեալ զանձինս տարեալք։ Զկնի երկուց աւուրց ի գիշերի երկրորդում զատկի, նոյնպէս յայլ կողմանէ վայնասուն եղեալ, մինչև հաւատալ վերակացուաց քաղաքիս թէ տաճիկք

digitised by A.R.A.R.@

եկեալ են, վասն այսորիկ զաղտ գրամբ գիչերով զհիւանդս ի հիւանդանոցէ որ է արտա-քոյ պարսպին, ի ներքս ածին։ Բայց ի ցերեկեան և այս ստեցաւ։ Սակայն պէսպէս զրոյց զմեզ վչտացուցանեն, մերթ ընկզմեն ի չուր և մերթ մուծանեն ի հուր, մեծ սըրտաբեկութիւն զոյ աստ. զինու[ո]ղք բաւական ոչ զոյ, պատրաստութիւն ոչ զոյ, կերակուր ոչ զոյ, ասեն գալոց է։ Երբ զրոյց լինի ընդ ոմանց ովիցիալից, կամ ընդ այլոց լէմսէից, ասեն, թուրքն ոչ է կարող գալ ի ներքոյ այսր, որպէս ասէին վասն փալամիսին նափօլոյ. մօթօն համեմատութեամբ առ սա զաւելի պատրաստութիւն և զզօրս ունէր քան զսա։ Պատրաստութիւն սոցա ի բոլոր ձմեռանս մինչև ցայժմ զփալիֆիքատ տնկել, և զուռս հիւսել, և ի բոլոր չրջապատն պարսպին վեց և հօթն տեղ, զչորս, զերեք, և զերկու հրացանս տեղաւորել։ Եւ այնքան լայնատարած է չրջանակ պարսպին, թէ իցեն ԺՌ [10,000] զօրք մէկ մէկ կալով ապա լցուցանեն. և այժմ երրորդ մաս ասացելոյս հազիւ գտանի զօրք։ Ճարտարապետն չինուածոյն պարսպի քաղաքիս այսորիկ լեալ է ճէնրալն այն, որոյ զգլուխն հատին աստ, որ զնիչն տուեալ էր, ի մօտակայ օրերս եկն ճէնրալ մի, որ վասն դիմիչվարու կարգեցեալ էր, քանի մի օր ի տան պարոն ովանիսին օթեանս կալաւ, և գնաց ի դմչվալ։ Դա ասացեալ է թէ ես գտանեցեալ էի աստ, վասն նոյն ճէնրալին, զայլ դատաստան առնել տայի, այսինքն ի 40 կտորս բաժանել գնա, որ այս-պիսի լայնատարած պարիսպ չրջպատեալ է, և այն ևս անկատար։ Միայն փալիֆիքատ զոյ, և ի ներքս կոյս այսքան դատարկ ընդարձակ տեղի թողեալ, որ սորա բազումք զօրք պիտոյք են. եթէ ի յայս կացութեան մնալով, եթէ 30 Ռ, տաճիկք գան, երեք օր ոչ տեւէ այս քաղաքս։ ... Դաև տաճիկքն ի մօտակայ տեղիս փալասանք տան. ահա այն բերթային, որ ուժիցայ կոչի, զոր սոքա ի հերու առեալ են, ի սահմանս պօսնայու, զոր անառիկ հռչակէին, ի մէջ որոյ 300 զօրք սոցա կային, զկնի 23ից աւուրց Ետուն տաճկին և եկին աստ. և ԺԲ զինուորք ի սոցանէ թուրքացեալ մնացեալ են անդ, ոլք էին ի գնդէ ճէնրալի քաղաքիս այսորիկ։ Ճէնրալն քաղաքիս որ վալուց աստ է, ծեր և չոր և տրտմական անձ մի է.....։

Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

1738ին ապրիլի 12
Գերորդ գիր ի սոյն թուիս
ի Պէլրղատու

Մինչ գրեցի զգիր մի և ի պատրաստի էի տալ զայն ի փոստն, լուայ զայլ իմն վայնասուն. ասեն կՌ տաճիկ անցեալ զգետն ի հողն ուլահու, կամի ի վեր անցանել, զի արգելցէ զօգնութիւնն թէ կերակրոյ և թէ մանկանց ի վայր եղելոցն 50000 ևս այսր քան զբարաքին, քստմնեալ են աստ բնաւքն, ուր ոչ զոյ մարդ և կերակուր։... այսօր և վաղիւ 5 և 6 տուն հայոց չունն աստի գնալ ի պուտիմ....։

Հ. Ղեւոնդ Տաճեան

Շարունակելի

digitised by A.R.A.R.@